| Փաստ. անվանումը | ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ |
|---|---|
| Փաստ. N | ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-29-01 |
| Հաստատման ամսաթիվը | 01/03/2012 |
| Արձանագրության N | 03/11-12 |
| Հաստատող մարմինը | Գիտական խորհուրդ |
| Մշակող | Որակի ապահովման կենտրոն |
| Ներդրման/իրականացման պատասխանատու | Կադրերի բաժին |

Փաստաթղթի փոփոխությունները

| Ամսաթիվ | Կատարված փոփոխություն | Անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն |
|---|---|---|
| 23.12.2015 | Կարգը մասնակիորեն վերանայվել և լրամշակվել է | Սուրեն Օհանյան Ռեկտոր |
| 14.04.2017 | Կատարվել է մասնակի լրացումներ (ամբիոնի վարիչներին գնահատում է ռեկտորը)<br><br>կարգի 3.2 և 5.1 կետերը խմբագրվել են | Գիտական խորհուրդ<br><br>Սուրեն Օհանյան |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

# Բովանդակություն

1. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........ ERROR! BOOKMARK NOT DEFINED.
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ........ 4
3. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ........ 4
4. ԵՄՀ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ ........ 4
5. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ........ 5
6. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ........ 5
7. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ ........ 6
8. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ........ 7

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ԵՄՀ դասախոսական կազմի գործունեության գնահատումն անցկացվում է՝ համաձայն ՀՀ կրթության մասին, բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքների, ՀՀ կրթության և գիտության նախարարության որակի գնահատմանն ուղղված փաստաթղթերի, համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի:

1.2 Դասախոսական կազմի գործունեության գնահատման կանոնակարգը սահմանում է ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնատաման, դասախոսի աշխատանքի վարձատրման և հավելավճարի կիրառման կարգը:

1.3 Դասախոսական կազմի գործունեության գնահատման կանոնակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՄՀ գիտական խորհուրդը:

1.4 Դասախոսական կազմի գործունեության գնահատումը բուհն իրականացնում է իր կրթական առաքելությանն ու նպատակներին համապատասխան:

1.5 Գնահատումը կատարվում է նախանշված աշխատանքային գործունեության, աշխատանքային պլանների, և դրանց կատարման փաստացի արդյունքների համապատասխանության հիման վրա, ինչպես նաև ինքնագնահատման, դասալսումների և ուսանողների կողմից լրացված գնահատման թերթիկների արդյունքներով:

1.6 Գնահատման գործընթացը դասախոսական կազմին հնարավորություն է տալիս տեղեկանալու աշխատանքի կատարողականին՝ չափելի և սահմանելի թերություններով և ձեռքբերումներով, իսկ ղեկավար կազմին՝ ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ:

## 2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Նպատակ ունենալով խթանել ԵՄՀ դասախոսների որակական անընդհատ աճը, գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը, արտալսարանային աշխատանքները ուսանողների հետ, ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները, մասնակցությունը համալսարանի և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ԵՄՀ ղեկավարությունը որոշեց ներդնել դասախոսների աշխատանքի տարբերակված վարձատրման համակարգ:

## 3. ԵՄՀ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1 Դասախոսի աշխատանքի վարձատրությունը հաշվարկվում է ըստ նախապես հաստատված տարեկան դրույքաչափի և աշխատանքային պայմանագրի: Պայմանավորված դասախոսի աշխատանքի կատարման որակով այն կարող է աճել: Աշխատողի դրույքաչափը պայմանավորված է տվյալ աշխատանքի կատարման առանձնահատկություններով, պահանջվող որակով և աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ:

3.2 Աշխատավարձը մեկ օրացույցային ամսվա ընթացքում աշխատողի կատարած աշխատանքի դիմաց վճարվելիք գումարն է, որը վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ՝

մինչև հաջորդ ամսվա 15-ը: Աշխատավարձի ուշացման դեպքում հաշվարկվում է օրական 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոս տույժ:

3.3 Դասախոսի բազային աշխատավարձն ամեն տարի նշանակվում է ըստ հաստիքացուցակի:

3.4 Դասախոսի հավելավճարը գոյանում է ուսումնական տարվա արդյունքներով իր կուտակած միավորներին համապատասխան:

3.5 Դասախոսների միավորների հաշվարկը կատարվում է ուսումնական տարվա վերջում և հաստատվում է ամբիոնի նիստում:

3.6 Որակի ապահովման կենտրոնը դասախոսներին, ըստ կուտակած միավորների, բաժանում է երեք խմբի՝ ամենացածր, միջին և ամենաբարձր միավորներ կուտակած:

3.7 Որակի ապահովման կենտրոնը արդյունքները մինչև տվյալ ուսումնական տարվա հուլիսի 15-ը երկայացնում է ռեկտորին:

## 4. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1 Դասախոսական կազմի գործունեության գնահատման սկզբունքներն են գնահատման՝

- բովանդակության համապատասխանությունը համալսարանի զարգացման գերակայություններին,
- օբյեկտիվությունը և հավաստիությունը,
- թափանցիկությունը և համակարգվածությունը,
- գնահատման տարբեր մեթոդների և տեխնիկաների համատեղումը,
- գնահատվողների խրախուսումը:

## 5. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

5.1 ԵՄՀ դասախոսների գնահատման համակարգը հիմնված է դասախոսի կատարողականի վրա: Գնահատման արդյուքների ամփոփումն ու վերլուծությունը իրականացնելուց հետո բուհի ռեկտորն այդ արդյունքների հիման վրա ընդունում է վարչական որոշումներ համաձայն որոնց.

- տրամադրվում են անվանական խրախուսական դրամական պարգևներ
- շարունակել համագործակցությունը՝ առանց պայմանագրային փոփոխությունների,
- շարունակել համագործակցությունը՝ վերանայելով վճարման չափը (հնարավոր բարձրացում կամ նվազում),
- ամբիոնին ներկայացվում են դասախոսի վերապատրաստման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկություններ,
- համալսարանը կարող է դադարեցնել համագործակցությունը դասախոսի հետ:

5.2 ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների գնահատման ռուբրիկին համապատասխան, դասախոսի գնահատման համակարգում

նշված չափանիշներով միավորը կրնկնապատկվում է կամ բազմապատկվում նշված բազմարկչի չափով (Հավելված 1):

## 6. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ

6.1. Համալսարանում գործում է դասախոսական կազմի գործունեության գնահատման 100 % համակարգ և հաշվարկվում է կշռված միջին միավոր.

| | | Գնահատման ձևը | % | Գնահատման միավորը | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| I | Ուսումնամեթոդական աշխատանք | Ինքնագնահատում (հանդիսանում է նախապատրաստական գնահատում) | 40% | 20 | | 70% |
| | | Գնահատում ամբիոնի վարիչի, կամ մեթոդական խորհրդատուի կողմից/ամբիոնի վարիչներին գնահատում է ռեկտորը/ | 35 % | 20 | | |
| | | Դասընթացի գնահատում ուսանողների կողմից | 25 % | 5 | | |
| | Ընդամենը | | 100 % | | | |
| II | Գիտական գործունեություն | Ինքնագնահատում (վերստուգվում է գիտահետազոտական կենտրոնի կողմից) | 100% | 20 | | 20% |
| III | Հասարակական գործունեություն | Ինքնագնահատում. վերստուգվում է անմիջական ղեկավարը՝ ամբիոնի վարիչը/ամբիոնի վարիչներին գնահատում է ռեկտորը/ | 100% | 20 | | 10% |
| | **Ընդամենը** | | | | | 100% |

6.2. Դասախոսի գնահատման նպատակով ամբիոնի վարիչի և/կամ մեթոդական խորհրդատուի կողմից դասալսումներն իրականացվում են ԵՄՀ դասալսումների անցկացման և քննարկման կարգին համապատասխան, դասավանդման գործընթացի դիտարկման քարտի միջոցով:

6.3. Դասախոսի գնահատման նպատակով ուսանողների կողմից գնահատման թերթիկների լրացման գործընթացն իրականացվում է դասընթացի գնահատման և դասախոսի և կրթական միջավայրի գնահատման թերթիկների միջոցով:

## 7. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

7.1. Դասախոսական կազմի գործունեության գնահատման անցկացման կազմակերպումը ԵՄՀ որակի ապահովման կենտրոնի և ամբիոնների՝ ամբիոնի վարիչի ղեկավարությամբ, պատասխանատվությունն է։

7.2. Որակի ապահովման կենտրոնը պատասխանատու է՝

- յուրաքանչյուր գնահատվող դասախոսի համար փաստագրական տեղեկատվական բազայի ստեղծման,
- գնահատման գոծընթացի կոորդինացման և հսկողության համար, բազմակողմանի գնահատման արդյունքները մեկ փաստաթղթում ամփոփելու համար։

| Հավելված 1. ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների գնահատման ռուբրիկ* | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գերազանց<br>3 | Լավ<br>2 | Բավարար<br>1 | Անբավարար<br>0 | Ինքնագնահատում | ամբիոնի վարիչի/մեթոդական խորհրդատուի ճշգրտում |
| Գիտական հրապարակումներ | | | | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի 2 հպապարակումներ ԵՄՀ-ի գիտաժողովի նյութերի տարեկան ժողովածուում* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հպապարակում ԵՄՀ-ի գիտաժողովի նյութերի տարեկան ժողովածուում* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հպապարակում ԵՄՀ-ի գիտաժողովի նյութերի տարեկան ժողովածուում* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հրապարակումներ ԵՄՀ-ի գիտաժողովի նյութերի տարեկան ժողովածուում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի 2 և ավելի հպապարակումներ ՀՀ-ում գրախոսվող (ԲՈՀ-ի կողմից ճանաչված) մասնագիտական ամսագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակում ՀՀ-ում գրախոսվող (ԲՈՀ-ի կողմից ճանաչված) մասնագիտական ամսագրերում* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հպապարակում ՀՀ-ում գրախոսվող (ԲՈՀ-ի կողմից ճանաչված) մասնագիտական ամսագրերում* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հրապարակումներ ՀՀ-ում գրախոսվող (ԲՈՀ-ի կողմից ճանաչված) մասնագիտական ամսագրերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի 2 և ավելի հպապարակումներ ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հպապարակում ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հպապարակում ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հրապարակումներ ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում և ունի 2 և ավելի հպապարակումներ օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հպապարակում օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հպապարակում օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հրապարակումներ օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած մենագրություն օտար լեզվով կամ արտ.երկրում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած մենագրություն հայերեն լեզվով* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հրապարակած մենագրություն* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի մենագրություններ | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի արտասահմանյան | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի ՀՀ-ում հրապարակած թեզիսներ* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի ՀՀ-ում համահեղինակությամբ | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հապարակված թեզիսներ | | |

* Աստղանիշով նշված կետերին դրական պատասխանելու դեպքում անհրաժեշտ է լրացնել հավելվածի համապատասխան բաժինը, ինչպես նաև կցել համապատասխան հիմքերը (օրինակ՝ հոդվածների պատճենները)

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| երկրներում հրապարակած թեզիսներ* **(միավորը կրկնապատկվում է)** | | հրապարակած թեզիսներ* | | | |
| Դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ | | | | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի օտար լեզվով հրապարակած դասագիրք* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած դասագիրք* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հրապարակած դասագիրք* | Դասախոսը տվյալ ուս.տարում տվյալ ուս.տարում չունի հրապարակած դասագիրք | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում և ունի օտար լեզվով հրապարակած ուսումնամեթոդական ձեռնարկ, տեսաֆիլմ* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած ուսումնամեթոդական ձեռնարկ, տեսաֆիլմ* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հրապարակած ուսումնամեթոդական ձեռնարկ, տեսաֆիլմ* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հրապարակած ուսումնամեթոդական ձեռնարկ, տեսաֆիլմ | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած ուսումնա-մեթոդական ձեռնարկ/յունիթ* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած մեթոդական ցուցումներ* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի համահեղինակությամբ հրապարակած մեթոդական ցուցումներ* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հրապարակած մեթոդական նյութեր | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած առարկայական ծրագրեր* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի մշակած 2 և ավելի առարկայական ծրագրեր* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի մշակած առարկայական ծրագիր* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի հրապարակած մշակած առարկայական ծրագրեր | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած մասնագիտական գրականության թարգմանություն անգլերեն կամ այլ լեզուներից* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի հրապարակած մասնագիտական գրականության թարգմանություն ռուսերեն լեզվից* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում կատարել է դասախոսության նյութերի թարգմանություն* | Դասախոսը տվյալ ուս.տարում թարգմանություններ չի կատարել | | |
| Գիտաժողովների զեկույցներ | | | | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում զեկույց է ներկայացրել միջազգային գիտաժողովին* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում զեկույց է ներկայացրել ՀՀ –ում կազմակերպված գիտաժողովին* | Դասախոսը տվյալ ուս.տարում զեկույց է ներկայացրելԵՄՀ-ում կազմակերպված գիտաժողովին* | Դասախոսը տվյալ ուս.տարում գիտաժողովների չի մասնակցել | | |
| Գիտահետազոտական ծրագրեր | | | | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է ներբուհական գիտական դրամաշնորհային ծրագրի ղեկավար* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է ներբուհական գիտական դրամաշնորհային ծրագրի մասնակից* | Դասախոսը տվյալ ուս.տարում նախապատրաստել է ներբուհական գիտական դրամաշնորհային ծրագրի փաթեթը* | Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված չէ ներբուհական հետազոտական ծրագրերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է ՀՀ-ում իրականացվող գիտական դրամաշնորհային ծրագրի | Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է ՀՀ-ում իրականացվող գիտական դրամաշնորհային ծրագրի | Դասախոսը տվյալ ուս.տարում նախապատրաստել է է ՀՀ-ում իրականացվող գիտական | Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված չէ ՀՀ-ում իրականացվող գիտական դրամաշնորհային | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ղեկավար* **(միավորը կրկնապատկվում է)** | մասնակից* | դրամաշնորհային ծրագրի փաթեթ* | ծրագրերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրի ղեկավար* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրի մասնակից* | Դասախոսը տվյալ ուս.տարում նախապատրաստել է է միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրի փաթեթ* | Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված չէ միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված է միջազգային այլ նախագծերում/ համատեղ հետազոտական ծրագրերում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում մասնակցել է գիտաուսումնական փոխանակության ծրագրի* | Դասախոսը տվյալ ուս.տարում մասնակցել է ամառային դպրոցի* | Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված չէ հետազոտական նախագծերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում մասնակցել է ներբուհական այլ հետազոտական ծրագրի* | Դասախոսը տվյալ ուս.տարում իրականացրել է վերապատրաստում դասախոսների համար* | Դասախոսը տվյալ ուս.տարում իրականացրել է գիտագործնական զեկույց համալսարանի դասախոսների համար* | Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված չէ համալսարանի հետազոտական նախագծերում | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում մասնակցել է միջազգային գիտական մրցույթների, օլիմպիադաների* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում մասնակցել է տարածաշրջանային գիտական մրցույթների, օլիմպիադաների* | Դասախոսը տվյալ ուս.տարում մասնակցել է ՀՀ-ում կազմակերպված գիտական մրցույթների, օլիմպիադաների* | Դասախոսը տվյալ ուս.տարում գիտական մրցույթների, օլիմպիադաների չի մասնակցել | | |
| Գրախոսություններ | | | | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի գիտական հոդվածի գրախոսություն անգլերեն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի գիտական հոդվածի գրախոսություն ռուսերեն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի գիտական հոդվածի գրախոսություն հայերեն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի գիտական հոդվածի գրախոսություններ | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի գիտական աշխատությունների ժողովածուի գրախոսություն գրախոսություններ անգլերեն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի գիտական աշխատությունների ժողովածուի գրախոսություն գրախոսություններ ուսերեն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի գիտական աշխատությունների ժողովածուի գրախոսություն հայերն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի գիտական աշխատությունների ժողովածուի գրախոսություն գրախոսություն | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում ունի մենագրության գրախոսություն անգլերեն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի մենագրության գրախոսություն գրախոսություն ուսերեն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում ունի մենախոսության գրախոսություն հայերն լեզվով* | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի մենագրության գրախոսություն | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում գրախոսել է դոկտորական ատենախոսություն* | Դասախոսը տվյալ ուս.տարում գրախոսել է թեկնածուական ատենախոսություն* | Դասախոսը տվյալ ուս.տարում գրախոսել է ավարտական աշխատանք/ մագիստրոսական ատենախոսություն* | Դասախոսը տվյալ ուս.տարում ատենախոսություններ չի գրախոսել | | |
| Ատենախոսություններ | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսացել է դոկտորական ատենախոսության ղեկավար/խորհրդատու* | Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսացել է թեկնածուական ատենախոսության ղեկավար/խորհրդատու* | Դասախոսը տվյալ ուս.տարում ղեկավարել է ավարտական աշխատանք/մագիստրոսական ատենախոսություն* | Դասախոսը տվյալ ուս.տարում ատենախոսություններ չի ղեկավարել | | |
| Դասախոսը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն** | Դասախոսը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն** | Դասախոսը հանդիսանում է ասպիրանտ/հայցորդ | Դասախոսը չունի գիտական աստիճան | | |
| Դասախոսը ստացել է ՀՀ Հանրային ծառայության կոչում կամ դասային աստիճան** | Դասախոսը ստացել է պրոֆեսորի կոչում** | Դասախոսը ստացել է դոցենտի կոչում** | Դասախոսը չունի գիտական կոչում | | |
| Աշխատանք ուսանողի հետ | | | | | |
| Դասախոսի ղեկավարությամբ տվյալ ուս.տարում արտ.երկրում ուսանողի հրատարակած հոդված, թեզիս և/կամ զեկույց միջազգային գիտաժողովում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսի ղեկավարությամբ տվյալ ուս.տարում ՀՀ-ում ուսանողի հրատարակած հոդված, թեզիս և/կամ զեկույց գիտաժողովում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսի ղեկավարությամբ տվյալ ուս.տարում ուսանողի զեկույց ԵՄՀ ուսանողական գիտաժողովում* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում չունի իր ղեկավարությամբ ուսանողի հրատարակած հոդված, թեզիս և/կամ զեկույց գիտաժողովում | | |
| Դասախոսի ղեկավարությամբ տվյալ ուս.տարում նախապատրաստված ուսանողները հաղթել են օլիմպիադաներ, մրցույթներ, դատախաղեր* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ուսանողներին նախապատրաստել է միջազգային օլիմպիադաների, մրցույթների, դատախաղերի* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ուսանողներին նախապատրաստել է ներպետական օլիմպիադաների, մրցույթների, դատախաղերի* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում չի նախապատրաստել ուսանողների օլիմպիադաների, մրցույթների, դատախաղերի | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է ուսանողական գիտական դրամաշնորհային ծրագրի ղեկավար* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ուսանողների հետ իրականացրել է հետազոտական ծրագիր* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ղեկավարել է ուսանողների գիտական ակումբ, խմբեր* **(միավորը կրկնապատկվում է)** | Դասախոսը տվյալ ուս.տարում ուսանողներին չի ներգրավել հետազոտական աշխատանքների | | |
| Գիտակազմակերպչական գործունեություն | | | | | |
| Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ | Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ/քարտուղար | Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի անդամ | Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված չէ գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի կազմում | | |

** Տվյալ ուս.տարում ստանալու դեպքում՝ կցել համապատասխան փաստաթուղթ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դասախոսը  տվյալ ուս.տարում հանդիսանում է  միջազգային գիտական պարբերականի խմբագրական խորհրդի կամ միջազգային գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ* | Դասախոսը  տվյալ ուս.տարում հանդիսանում է գիտական պարբերականի խմբագրական խորհրդի նախագահ* | Դասախոսը տվյալ ուս.տարում հանդիսանում է գիտական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ* | Դասախոսը տվյալ ուս.տարում ներգրավված չէ գիտական պարբերականի խմբագրական խորհրդի կազմում | | |
| **Ընդամենը** | | | | | |